ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Որակի ենթակառուցվածքի զարգացման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Վարչությունը իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, այլ իրավական ակտերով, Նախարարության կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Նախարարը՝ Նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ:

4. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են վարչության պետը և վարչության բաժինները:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

5. Վարչության հիմնական խնդիրներն են՝

1) որակի ենթակառուցվածքի՝ տեխնիկական կանոնակարգման, համապատասխանության գնահատման, ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտների քաղաքականության մշակումը և համակարգումը,

2) իր իրավասության շրջանակներում Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ), Եվրոպական Միության (այսուհետ՝ ԵՄ) հետ համագործակցության համար ոլորտային իրավական կարգավորումների ստեղծումը և կիրարկման ապահովումը,

3) որակի ենթակառուցվածքի՝ տեխնիկական կանոնակարգման, համապատասխանության գնահատման, ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտներում միջազգային կառույցների՝ ԵԱՏՄ, ԵՄ, Անկախ պետությունների համագործակցության (այսուհետ՝ ԱՊՀ), Առևտրի համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ), Առողջապահության համաշխարհային կազմակերպության և այլ միջազգային (PTB, OIML, UNIDO, WB) կազմակերպությունների հետ ոլորտային համագործակցության իրականացումը,

4) կանոնակարգվող և չկանոնակարգվող ոլորտներում անվտանգ արտադրանքի արտադրության ու շրջանառության դուրսբերման նպաստումը՝ ապահովելով համապատասխան ոլորտային ներդաշնակեցված իրավական դաշտի առկայություն,

5) կանոնակարգվող և չկանոնակարգվող ոլորտներում արտադրանքի ներքին և արտաքին շուկաներ մուտք գործելու խոչընդոտների (այսուհետ՝ ԱՏԽ) վերացման, արտաքին առևտրի խթանման, արտահանման շուկաներում հասանելիության նպաստումը՝ ապահովելով գործող օրենսդրական դաշտում առկա տարբերությունների բացահայտումը, ոլորտային մշտադիտարկումը և հնարավոր իրավական լուծումների առաջադրումը,

6) որակի ենթակառուցվածքի համակարգի բաղկացուցիչ մասեր հանդիսացող ոլորտների շարունակական զարգացման, ոլորտային հեռանկարային ռազմավարության մշակման, թիրախների սահմանման և կիրարկման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը,

7) կանոնակարգվող ոլորտում համապատասխանության գնահատման մարմինների նշանակման գործընթացի իրականացումը,

8) տեխնիկական կանոնակարգման, համապատասխանության գնահատման, ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտների մշտադիտարկման արդյունքում խնդիրների վերհանումը՝ ապահովելով խնդիրների բացառմանն ու բարեփոխմանը միտված համապատասխան իրավական կարգավորումներ:

6. Վարչության հիմնական նպատակներն են՝

1) անվտանգ արտադրանքի շրջանառության ապահովումը, առևտրում առկա տեխնիկական խոչընդոտների նվազեցումը, մրցունակ արտադրանքի արտադրության խթանումը և անբարեխիղճ գործելակերպի կանխարգելումը; շուկայահանվող կանոնակարգվող և չկանոնակարգվող անվտանգ արտադրանքի առկայության ապահովումը,

2) արտահանման ծավալների ավելացումը, տեղական արտադրանքի համար նոր շուկաների ձեռքբերումը, ազգային արտադրանքի շուկայահանման ծավալների աճը, ինչպես նաև «Արտադրված է Հայաստանում» արտադրանքի ճանաչելության բարձրացումը,

3) սպառողների շահերի պաշտպանության մակարդակի բարձրացումը,

4) ՀՀ համապատասխանության գնահատման փաստաթղթերի հասանելիության ապահովումը հիմնական արտահանման շուկաներում,

5) առանց լրացուցիչ համապատասխանության գնահատման, ֆինանսական ռեսուրսների և ժամանակի ծախսի ԵՄ երկրներ արտադրանքի արտահանումը՝ ստեղծելով բարենպաստ

պայմաններ տեղական արտադրողի համար և բացառելով նույն արտադրանքի վերագնահատման (կրկնակի փորձարկման և սերտիֆիկացման) անհրաժեշտությունը,

6) տնտեսության տարբեր ճյուղերում միջազգայնորեն ճանաչելի, հետևելի, ճշգրիտ չափումների ներդրումը՝ ապահովելով ՀՀ-ի բազմաթիվ ոլորտներում կիրառվող սարքավորումների ճշգրտությունը և չափագիտական անկախությունը, լաբորատոր փորձարկումների հիման վրա ճշգրիտ ախտորոշումների իրականացումը,

7) միջազգային ճանաչում ունեցող հավատարմագրման համակարգի ձեռքբերումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչության գործառույթներն են՝

1) տեխնիկական կանոնակարգման, համապատասխանության գնահատման, ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտների քաղաքականության մշակումը և համակարգումը,

2) տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի մշակման գործընթացներում, ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտներում նախարարության այլ ստորաբաժանումների, պետական կառավարման մարմինների, մասնագիտացված կառույցների, գործարար միջավայրի, օտարերկրյա և/կամ միջազգային կազմակերպությունների համագործակցության աշխատանքների կազմակերպումը և համակարգումը՝ նպաստելով ոլորտային համատեղ զարգացման ծրագրերի ձևավորմանը,

3) նախարարության իրավասության ոլորտների նոր տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի մշակման, գործող տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի, ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտներում իրավական կարգավորումների վերանայման գործընթացի կազմակերպումը, ապահովումը և համակարգումը,

4) չափագիտության և ստանդարտացման, հավատարմագրման ազգային մարմինների գործունեության համակարգման աշխատանքների ապահովումը՝ իրականացնելով ազգային մարմինների մշտադիտարկումը,

5) ԵԱՏՄ, ԱՊՀ և այլ շրջանակներում ոլորտային համաձայնագրերի և պայմանագրերի վավերացման գործընթացների հետ կապված աշխատանքների ապահովումը և նպաստումը ոլորտային կառույցների հետ հուշագրերի կնքմանը,

6) պետության կողմից կանոնակարգվող ոլորտներում համապատասխանության գնահատման մարմինների նշանակման գործընթացի կազմակերպումը և իրականացումը, նշանակված համապատասխանության գնահատման մարմինների ցանկի հրապարակումը նախարարության պաշտոնական կայքում, ցանկի շարունակական արդիականացումը, համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանի վարումը,

7) համապատասխանության գնահատման մարմինների նշանակման բողոքարկման հետ կապված գործընթացի կազմակերպումը և իրականացումը, ինչպես նաև համապատասխանության գնահատման մարմինների նշանակման բողոքարկման գրանցամատյանի վարումը,

8) արտադրանքի ցուցանիշների չափումների (փորձարկումների) ճշգրիտ արդյունքներ ապահովող էտալոնային (արբիտրաժային կամ ռեֆերենսային) լաբորատորիաների ճանաչման գործընթացի կազմակերպումը և իրականացումը,

9) ոլորտային միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության ապահովումը, տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման, ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտներում համապատասխան համադրությունների իրականացումը, բարենպաստ իրավական կարգավորումների և առաջարկությունների մշակումը և իրականացումը,

10) ԵԱՏՄ շրջանակներում նոր մշակվող տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի, ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման կամ հավատարմագրման ոլորտները կարգավորող փաստաթղթերի կամ գործող տեխնիկական կանոնակարգերում, համապատասխանության գնահատման ընթացակարգերում, ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման կամ հավատարմագրման ոլորտները կարգավորող փաստաթղթերում փոփոխությունների կատարման նպատակով համապատասխան մակարդակով ընդգրկվածության ապահովումը և մասնակցությունը,

11) պետական կառավարման մարմինների, ինչպես նաև այլ գերատեսչությունների կողմից ներկայացվող ոլորտային իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրումը, ՀՀ օրենսդրության

կատարելագործման նպատակով ոլորտային իրավական ակտերի նախագծերի մշակումը և դրանց վերաբերյալ սահմանված կարգով առաջարկությունների ներկայացումը,

12) Հայաստանի Հանրապետության և ԵՄ, ԵԱՏՄ, ԱՊՀ, ինչպես նաև միջազգային պայմանագրերին (կառույցներին) անդամակցելու արդյունքում (դրանց առկայության դեպքում) առաջացող տեխնիկական խոչընդոտների ոլորտի օրենսդրությունների ուսումնասիրության, ՀՀ գործող իրավական կարգավորումների հետ համադրության իրականացումը, առկա տարբերությունների բացահայտումը և հնարավոր լուծումների առաջադրումը,

13) ԵԱՏՄ, ԵՄ, ՀՀ գործող և նոր մշակվող տեխնիկական կանոնակարգերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտներում իրավակարգավորումների քննարկման, ինչպես նաև ոլորտային խնդիրներին լուծումներ տալու նպատակով համապատասխան քննարկումների, տեսակոնֆերանսների կազմակերպումը՝ շահագրգիռ մարմինների և գործարար միջավայրի ներկայացուցիչների հետ համատեղ,

14) ԵՏՀ Կոլեգիայում, Խորհրդատվական կոմիտեում և ԵՏՀ Խորհրդում քննարկվող ոլորտային հարցերի վերաբերյալ հայկական կողմի դիրքորոշման ձևավորման և ներկայացման ապահովումը,

15) տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի նկատմամբ սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումներին մասնակցության ապահովումը,

16) իր իրավասության շրջանակներում արտադրանքի անվտանգությանը, դրա նկատմամբ վերահսկողական գործառույթներին և սպառողների շահերի պաշտպանությանն առնչվող քաղաքականության մշակման մասնակցության ապահովումը, տեսչական մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրության և առաջարկությունների ներկայացման ապահովումը,

17) համապատասխանության գնահատման մարմինների կողմից իրականացված գործունեության եռամսյակային տեղեկատվության հավաքագրումը, ամփոփումը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան մարմիններին տրամադրումը,

18) ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտներում Նախարարության ենթակայությամբ գործող մարմինների կողմից իրականացված գործունեության եռամսյակային հաշվետվությունների հավաքագրման ու ամփոփման, որակական

և քանակական վերլուծությունների հիման վրա եզրակացությունների կազմման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան մարմիններին տրամադրման գործընթացների իրականացումը,

19) անվտանգ արտադրանքի ներքին և արտաքին շուկաներ մուտք գործելու խոչընդոտների վերացմանն ուղղված աշխատանքների իրականացումը և համակարգումը,

20) վարչության ոլորտներին առնչվող գործառույթների, խնդիրների համակարգումը, դրանց վերաբերյալ մասնագիտական պարզաբանումների, վերլուծությունների, պատասխանների պատրաստումը, ըստ անհրաժեշտության համապատասխան քայլերի նախաձեռնումը, տեխնիկական կանոնակարգերի ամբողջական կիրարկումն ապահովելու նպատակով գործող տեխնիկական կանոնակարգերի շարունակական մշտադիտարկման իրականացումը և ըստ անհրաժեշտության համապատասխան զեկուցագրերի, հաշվետվությունների, առաջարկությունների մշակումը և ներկայացումը, այդ թվում՝ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,

21) տարածաշրջանային և միջազգային հավատարմագրման կազմակերպությունների հետ (EA, ILAC,IAF) հավատարմագրման ազգային մարմնի միջազգային ճանաչմանն ուղղված երկկողմ և բազմակողմ ճանաչման համաձայնագրերի կնքմանը և հավատարմագրման ազգային մարմնի միջազգային ճանաչմանն ուղղված աշխատանքների համակարգումը,

22) ՀՀ-ում հավատարմագրման և համապատասխանության գնահատման գործընթացների էլեկտրոնային համակարգի հետ կապված աշխատանքների համակարգումը,

23) ՀՀ-ում միջազգային ճանաչում ունեցող տրամաչափարկման լաբորատորիաների ստեղծմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը և համակարգումը,

24) համապատասխանության գնահատման փաստաթղթերի, ինչպես նաև փորձարկման լաբորատորիաների կողմից իրականացվող լաբորատոր փորձարկումների հասանելիության և մատչելիության բարձրացմանը, հիմնական արտահանման շուկաներում համապատասխանության գնահատման փաստաթղթերի ճանաչելիությանն ուղղված աշխատանքների համակարգումը,

25) պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման համար սահմանված ժամկետում որակի ենթակառուցվածքի բաղկացուցիչ մաս հանդիսացող ոլորտներին առնչվող պայմանագրերի մշակման և հաստատման ապահովումը, ազգային մարմինների կողմից հաշվետվությունների ընդունումը, եզրակացությունների պատրաստումը,

26) ոլորտային միջնաժամկետ ծախսային ծրագրերի և բյուջետային հայտերի նախապատրաստումը և ներկայացումը,

27) Համաշխարհային բանկի վարկային ծրագրի, ԵՄ (CEPA, OIML, PTB) շրջանակներում սահմանված բաղադրիչների մասով միջոցառումների կատարման ապահովումը և համակարգումը,

28) Ստանդարտների մշակման պետական ամենամյա ծրագրի մշակման ապահովումը և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատման ներկայացումը, սահմանված ստանդարտների մշակման գործընթացի մասով հսկողության իրականացումը,

29) տեխնիկական կանոնակարգերի ամբողջական համապատասխանության գնահատման նպատակով համապատասխանության գնահատման «բաց» ոլորտների ուսումնասիրումը, ներդրումային ծրագրերի առաջարկությունների (փաթեթների) ձևավորումը և հրապարակումը,

30) տեխնիկական կանոնակարգման կիրարկումն ապահովող միջազգային, տարածաշրջանային և ազգային ստանդարտների, տեխնիկական պայմանների, համապատասխանության գնահատման ընթացակարգերին առնչվող խնդիրների վերաբերյալ համապատասխանության գնահատման մարմիններից ստացված առաջարկությունների ուսումնասիրության ապահովումը և դրանց կարգավորմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը ԵՏՀ,

31) վարչության առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրների և աշխատանքների կազմակերպումը և վերլուծումը, վարչությանը վերապահված այլ գործառույթների իրականացման ապահովումը,

32) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված՝ նախարարության կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթներ:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

8. Վարչությունը կազմված է հետևյալ բաժիններից.

1) Տեխնիկական կանոնակարգման բաժին,

2) Ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման բաժին:

9. Վարչության բաժիններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

10. Տեխնիկական կանոնակարգման բաժնի հիմնական գործառույթներն են.

1) տեխնիկական կանոնակարգման, համապատասխանության գնահատման ոլորտների քաղաքականության մշակումը և համակարգումը,

2) տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի մշակման գործընթացում նախարարության այլ ստորաբաժանումների, պետական կառավարման մարմինների, մասնագիտացված կառույցների, գործարար միջավայրի, օտարերկրյա և/կամ միջազգային կազմակերպությունների համագործակցության աշխատանքները և նախարարության իրավասության ոլորտների նոր տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի մշակման, գործող տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի վերանայման գործընթացի կազմակերպումը և համակարգումը,

3) որակի ենթակառուցվածքի բաղկացուցիչ մասեր հանդիսացող տեխնիկական կանոնակարգման, համապատասխանության գնահատման ոլորտների զարգացման միջոցառումների և գործողությունների ծրագրերի մշակման ապահովումը,

4) ԵԱՏՄ, ԱՊՀ և այլ շրջանակներում ոլորտային համաձայնագրերի և պայմանագրերի վավերացման գործընթացների հետ կապված աշխատանքների ապահովումը և նպաստումը ոլորտային կառույցների հետ հուշագրերի կնքմանը,

5) ոլորտային միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն, տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման ոլորտներում համապատասխան համադրությունների իրականացումը, բարենպաստ իրավական կարգավորումների և առաջարկությունների մշակման և իրականացման ապահովումը,

6) ՀՀ օրենսդրության կատարելագործման նպատակով տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման ոլորտներին առնչվող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն առաջարկությունների ներկայացումը,

7) ԵԱՏՄ շրջանակներում նոր մշակվող տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի կամ գործող տեխնիկական կանոնակարգերում, համապատասխանության գնահատման ընթացակարգերում

փոփոխությունների կատարման նպատակով համապատասխան մակարդակով ընդգրկվածության ապահովումը և մասնակցությունը,

8) պետական կառավարման մարմինների, ինչպես նաև այլ գերատեսչությունների կողմից ներկայացվող տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման ոլորտներին առնչվող իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրության ապահովումը, դրանց վերաբերյալ դիրքորոշման ներկայացումը,

9) Հայաստանի Հանրապետության և ԵՄ, ԵԱՏՄ, ԱՊՀ, ինչպես նաև միջազգային պայմանագրերին (կառույցներին) անդամակցելու արդյունքում (դրանց առկայության դեպքում) առաջացող տեխնիկական խոչընդոտների ոլորտի օրենսդրությունների ուսումնասիրությունը, ՀՀ գործող իրավական կարգավորումների հետ համադրությունը, առկա տարբերությունների բացահայտումը և հնարավոր լուծումների առաջադրումը,

10) ԵԱՏՄ, ԵՄ, ՀՀ գործող և նոր մշակվող տեխնիկական կանոնակարգերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, քննարկման, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգման ոլորտում ծագած խնդիրներին լուծումներ տալու նպատակով համապատասխան քննարկումների, տեսակոնֆերանսների կազմակերպումը՝ շահագրգիռ մարմինների և գործարար միջավայրի ներկայացուցիչների հետ համատեղ,

11) ԵՏՀ Կոլեգիայում, Խորհրդատվական կոմիտեում և ԵՏՀ Խորհրդում քննարկվող ոլորտային հարցերի վերաբերյալ հայկական կողմի դիրքորոշման ձևավորման և ներկայացման ապահովումը,

12) տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի նկատմամբ սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումներին մասնակցության ապահովումը,

13) իր իրավասության շրջանակներում արտադրանքի անվտանգությանը, դրա նկատմամբ վերահսկողական գործառույթներին և սպառողների շահերի պաշտպանությանն առնչվող քաղաքականության մշակման մասնակցության ապահովումը, տեսչական մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրության և առաջարկությունների ներկայացման ապահովումը,

14) անվտանգ արտադրանքի ներքին և արտաքին շուկաներ մուտք գործելու խոչընդոտների վերացմանն ուղղված աշխատանքների իրականացումը և համակարգումը,

15) Բաժնի ոլորտներին առնչվող գործառույթների, խնդիրների համակարգումը, դրանց վերաբերյալ մասնագիտական պարզաբանումների, վերլուծությունների, պատասխանների պատրաստումը, ըստ անհրաժեշտության համապատասխան քայլերի նախաձեռնումը, այդ թվում՝ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,

16) տեխնիկական կանոնակարգերի ամբողջական կիրարկումն ապահովելու նպատակով գործող տեխնիկական կանոնակարգերի շարունակական մշտադիտարկման իրականացումը և ըստ անհրաժեշտության համապատասխան զեկուցագրերի, հաշվետվությունների, առաջարկությունների մշակումը և ներկայացումը,

17) տեխնիկական կանոնակարգերի մշակման նպատակով ոլորտային միջնաժամկետ ծախսային ծրագրերի և բյուջետային հայտերի նախապատրաստումը և ներկայացումը,

18) Տեխնիկական կանոնակարգերի ամբողջական համապատասխանության գնահատման նպատակով համապատասխանության գնահատման «բաց» ոլորտների ուսումնասիրումը, ներդրումային ծրագրերի առաջարկությունների (փաթեթների) ձևավորումը և ներկայացումը,

19) տեխնիկական կանոնակարգման կիրարկումն ապահովող միջազգային, տարածաշրջանային և ազգային ստանդարտների, տեխնիկական պայմանների, համապատասխանության գնահատման ընթացակարգերին առնչվող խնդիրների վերաբերյալ համապատասխանության գնահատման մարմիններից ստացված առաջարկությունների ուսումնասիրությունը և դրանց կարգավորմանն ուղղված առաջարկությունների ներկայացման ապահովումը ԵՏՀ,

20) բաժնի առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրների և աշխատանքների կազմակերպումը,

21) այլ գործառույթներ՝ Բաժնի պետին վերապահված լիազորությունների շրջանակներում:

11. Ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման բաժնի հիմնական գործառույթներն են.

1) ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտների քաղաքականության մշակումը և համակարգումը,

2) ԵԱՏՄ, ԱՊՀ և այլ շրջանակներում ոլորտային համաձայնագրերի և պայմանագրերի վավերացման գործընթացների հետ կապված աշխատանքների ապահովումը և նպաստումը ոլորտային կառույցների հետ հուշագրերի կնքմանը,

3) ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման, հավատարմագրման ոլորտների քաղաքականության մշակման գործընթացում Նախարարության այլ ստորաբաժանումների, պետական կառավարման մարմինների և մասնագիտացված կառույցների հետ համագործակցության կազմակերպումը և համակարգումը,

4) չափագիտության և ստանդարտացման, հավատարմագրման ազգային մարմինների գործունեության համակարգման աշխատանքների համակարգումը՝ իրականացնելով ազգային մարմինների մշտադիտարկումը,

5) Հայաստանի Հանրապետության և ԵԱՏՄ, ԵՄ, ԱՊՀ, ինչպես նաև միջազգային պայմանագրերով (դրանց առկայության դեպքում) նախատեսված որակի ենթակառուցվածքի համակարգի ոլորտներում օրենսդրությունների մեջ առկա հակասությունների բացահայտման և հնարավոր լուծումների առաջադրման կազմակերպումը,

6) ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտներում միջազգային համագործակցության աշխատանքների կազմակերպումը և համակարգումը՝ նպաստելով ոլորտային համատեղ զարգացման ծրագրերի ձևավորմանը,

7) ՀՀ օրենսդրության կատարելագործման նպատակով ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտներին առնչվող իրավական ակտերի նախագծերի մշակման և դրանց վերաբերյալ սահմանված կարգով առաջարկությունների ներկայացման ապահովումը,

8) Հայաստանի Հանրապետության նախարարությունների, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմինների կողմից մշակվող, համապատասխան ոլորտներին առնչվող իրավական ակտերի նախագծերի քննարկումը և համապատասխան դիրքորոշման տրամադրումը,

9) պետության կողմից կանոնակարգվող ոլորտներում համապատասխանության գնահատման մարմինների նշանակման գործընթացի կազմակերպումը և իրականացումը, նշանակված համապատասխանության գնահատման մարմինների ցանկի հրապարակումը նախարարության պաշտոնական կայքում, ցանկի շարունակական արդիականացումը, համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանի վարումը,

10) համապատասխանության գնահատման մարմինների նշանակման բողոքարկման հետ կապված գործընթացի կազմակերպումը և իրականացումը, ինչպես նաև համապատասխանության գնահատման մարմինների նշանակման բողոքարկման գրանցամատյանի վարումը,

11) արտադրանքի ցուցանիշների չափումների (փորձարկումների) ճշգրիտ արդյունքներ ապահովող էտալոնային (արբիտրաժային կամ ռեֆերենսային) լաբորատորիաների ճանաչման գործընթացի կազմակերպումը և իրականացումը,

12) ԵԱՏՄ, ԵՄ, ՀՀ գործող և նոր մշակվող՝ ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտներում գործող իրավական ակտերի պարզաբանման, քննարկման, ինչպես նաև նշված ոլորտներում ծագած խնդիրներին լուծումներ տալու նպատակով համապատասխան քննարկումների, տեսակոնֆերանսների կազմակերպումը՝ շահագրգիռ մարմինների և գործարար միջավայրի ներկայացուցիչների հետ համատեղ,

13) իր իրավասության շրջանակներում արտադրանքի անվտանգությանը, դրա նկատմամբ վերահսկողական գործառույթներին և սպառողների շահերի պաշտպանությանն առնչվող քաղաքականության մշակման մասնակցության ապահովումը, տեսչական մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրության և առաջարկությունների ներկայացման ապահովումը,

14) համապատասխանության գնահատման մարմինների կողմից իրականացված գործունեության եռամսյակային տեղեկատվության հավաքագրումը, ամփոփումը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան մարմիններին տրամադրումը,

15) ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտներում Նախարարության ենթակայությամբ գործող մարմինների կողմից իրականացված գործունեության եռամսյակային հաշվետվությունների հավաքագրման ու ամփոփման, որակական և քանակական վերլուծությունների հիման վրա եզրակացությունների կազմման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան մարմիններին տրամադրման գործընթացների իրականացումը,

16) բաժնի ոլորտներին առնչվող գործառույթների, խնդիրների համակարգումը, դրանց վերաբերյալ մասնագիտական պարզաբանումների, վերլուծությունների, պատասխանների պատրաստումը, ըստ անհրաժեշտության համապատասխան քայլերի նախաձեռնումը, այդ թվում՝ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,

17) տարածաշրջանային և միջազգային հավատարմագրման կազմակերպությունների հետ (EA, ILAC,IAF) հավատարմագրման ազգային մարմնի միջազգային ճանաչմանն ուղղված երկկողմ և

բազմակողմ ճանաչման համաձայնագրերի կնքմանը և հավատարմագրման ազգային մարմնի միջազգային ճանաչմանն ուղղված աշխատանքների համակարգումը,

18) ՀՀ-ում հավատարմագրման և համապատասխանության գնահատման գործընթացների էլեկտրոնային համակարգի հետ կապված աշխատանքների համակարգումը,

19) ՀՀ-ում միջազգային ճանաչում ունեցող տրամաչափարկման լաբորատորիաների ստեղծմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը և համակարգումը,

20) համապատասխանության գնահատման փաստաթղթերի, ինչպես նաև փորձարկման լաբորատորիաների կողմից իրականացվող լաբորատոր փորձարկումների հասանելիության և մատչելիության բարձրացմանը, հիմնական արտահանման շուկաներում համապատասխանության գնահատման փաստաթղթերի ճանաչելիությանն ուղղված աշխատանքների համակարգումը,

21) պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման համար սահմանված ժամկետում հավատարմագրման և ստանդարտների մշակման մասով պայմանագրերի մշակման և հաստատման ապահովումը, ազգային մարմինների կողմից հաշվետվությունների ընդունումը, եզրակացությունների պատրաստումը,

22) ոլորտային միջնաժամկետ ծախսային ծրագրերի և բյուջետային հայտերի նախապատրաստումը և ներկայացումը,

23) Համաշխարհային բանկի վարկային ծրագրի, ԵՄ (CEPA, OIML, PTB) շրջանակներում սահմանված բաղադրիչների մասով միջոցառումների կատարման ապահովումը և համակարգումը,

24) Ստանդարտների ամենամյա ծրագրի մշակման ապահովումը և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատման ներկայացումը, դրանց մշակման ապահովումը,

25) բաժնի առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրների և աշխատանքների կազմակերպումը,

26) այլ գործառույթներ՝ Բաժնի պետին վերապահված լիազորությունների շրջանակներում:

VI. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

12. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է վարչության պետը:

13. Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է նախարարին:

14. Վարչության բաժինները ղեկավարում են բաժինների պետերը:

15. Բաժինների պետերն անմիջական ենթակա և հաշվետու են վարչության պետին:

16. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության բաժինների պետերից մեկը՝ վարչության պետի ներկայացմամբ:

17. Վարչության կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են Վարչության պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրան փոխարինողի կողմից:

18. Վարչության աշխատողները կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովներում և այլ աշխատանքային խմբերում:

19. Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: